

Անկախ աուդիտորի հաշվետվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի ընկերության բաժնետերերին և խորհրդին

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի («Ընկերություն») 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք չձևափոխված կարծիք ենք արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2015թ. ապրիլի 30-ին: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի ազդեցությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներով («ՖՐՄՍ»): Հետևաբար՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար


Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքով աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ տարբերակը կազմելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը


Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից Աուդիտի Միջազգային Ստանդարտ (ԱՍՏ) 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:


Կարծիք

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմվել են «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի՝ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, բոլոր էական առումներով համապատասխանում են այդ ֆինանսական հաշվետվություններին, ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքով:


Արթուր Հակոբյան
Գործադիր տնօրեն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
30 ապրիլի, 2015թ.




Արմինե Ղևոնդյան
Աուդիտի ղեկավար

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմսոն Լիմիտեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիլիանների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմսոն Լիմիտեդ»-ի, կրա անդամ ֆիլիանների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.am/about:
© 2015 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: